

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի ----- N-----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 872-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 1567-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 871-Ն որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին գույք հանձնելու մասին» N 872-Ն որոշման N 1 հավելվածի 88-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի» բառերը:

3. Ընդունել ի գիտություն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամների փոխադարձ պայմանավորվածությունն առ այն, որ բակալավրի, մագիստրոսի և միջին մասնագիտական կրթական ծրագրերով «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ ընդունված սովորողների հետագա ուսումնառությունը «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամում կկազմակերպվի «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գործող կրթական չափորոշիչներին համապատասխան, ինչը հնարավորություն կտա ուսումնառությունն ավարտելուց հետո նրանց շնորհել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ավարտական փաստաթուղթ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

Հիմնավորում

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 872-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի թիվ 871-ն որոշմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ստեղծվել է Հայաստանի ագրարային համալսարանի մասնաճյուղ, որը գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներին համապատասխան:

2015 թվականի դեկտեմբերի 28-ի ԼՂՀ կառավարության հմ. 911-Ն որոշմամբ հիմնադրվել է «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամը, որին վերապահվել է ագրարային մասնագիտությունների գծով ընդունելության և ուսուցման կազմակերպում:

Ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, որ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հիմնադրումից հետո Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնաճյուղին չեն հատկացվում ընդունելություն տեղեր և այս պահին մասնաճյուղում սովորում են միայն 3-րդ և բարձր կուրսերի ուսանողներ, ինչպես նաև միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողներ:

Ստեղծված իրավիճակում առաջացել է լրջագույն խնդիր մասնաճյուղի ուսանողների և դասախոսական անձնակազմի հետագայի համար, քանի որ ուսանողները հրաժարվում են տեղափոխվել Շուշիի տեխնոլոգիական համալսարան և ստանալ վերջինիս կողմից շնորհվող ավարտական փաստաթուղթը:

Նկատի ունենալով առաջացած խնդրի կարևորությունը հայաստանյան կողմը (Հայաստանի ազգային ագրարային համալսարան, ՀՀ կրթության և գիտության նախարարություն) և ղարաբաղյան կողմը (ԼՂՀ կառավարություն, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Շուշիի տեխնոլոգիական համալսարան) սկսեցին իրականացնել բանակցություններ, որի արդյունքում ԼՂՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի հմ. 233-Ն որոշմամբ «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ կատարվեց փոփոխություն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի կազմերում հատկացվեցին տեղեր՝ նրան վերապահելով կառավարչական և գիտակառավարչական լիազորություններ:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի հմ. 871-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման դեպքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնաճյուղի գործունեությունը կդադարի, մասնաճյուղի սովորողները կտեղափոխվեն Շուշիի տեխնոլոգիական

համալսարանի համակազմ, կրթական գործունեության գործընթացը կվերահսկվի ագրարային համալսարանի կողմից և նրանց կշնորհվի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ավարտական փաստաթուղթ:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Սույն նախագծի ընդունումը նպատակ ունի կարգավորելու «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մասնաճյուղի գործունեության դադարման և ուսանողների հետագա ուսումնառության և ավարտական փաստաթղթի հետ կապված հարցերը

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Սույն նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունմամբ կկանոնակարգվի երկու համալսարանների համագործակցությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 872-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում այլ իրավական
ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 872-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական կամ
տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի
ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 871-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 872-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>ՀՀ ֆինանսների նախարարության ս/թ օգոստոսի 15-ի հմ. 01.1/92/14891-17 գրություն</p>	<p>1. Նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 7-ի «ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղ ստեղծելու և ՀՀ կառավարության 2005 թ. սեպտեմբերի 15-ի N 1567-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 871-Ն որոշումը: Այդ կապակցությամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 14-ի N 872-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությունը պարունակում է նաև «ՀԱՊՀ» ՊՈԱԿ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի վերաբերյալ տեղեկություններ՝ առաջարկում ենք միաժամանակ փոփոխություն կատարել նաև Կանոնադրության 88-րդ կետում: Առաջարկվող փոփոխության արդյունքում կառաջանա նաև Կանոնադրության փոփոխության պետական գրանցման անհրաժեշտություն, հետևաբար՝ առաջարկում ենք կարգավորել նաև պետական գրանցման ծախսերի հետ կապված հարաբերությունները:</p> <p>2. Նախագծի 1-ին կետում «մասնաճյուղ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «(այսուհետ՝ Մասնաճյուղ)» բառերը:</p> <p>3. «Իրավական ակտերի մասին»</p>	<p>1. Ընդունված է:</p> <p>2. Առաջարկությունն ընդունելի չէ:</p> <p>3. Ընդունված է:</p>	<p>1. Կատարված է համապատասխան փոփոխություն:</p> <p>2. Նախագիծը մնացել է անփոփոխ:</p> <p>3. Կատարված է</p>

	<p>ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Նախագծի 4-րդ կետի «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերն առաջարկում ենք փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:</p>		<p>համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարության ս/թ սեպտեմբերի 4-ի հմ. 01/15555-17 գրություն</p>	<p>ՀՀ կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը:</p>	<p>-</p>	<p>-</p>